ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«19» հունիսի 2019 թվականի N: 74 ք.Գյումրի

ԱԼԲԵՐՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի 2019 թվականի հունիսի 18-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանին 2019 թվականի հունիսի 19-ին գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե՝ սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ սեմինար-քննարկումներին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2019 թվականի հունիսի 19-ին:
3. Ալբերտ Մարգարյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ Տիգրան Հարությունյանին:
4. Ալբերտ Մարգարյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է